Վ. Լ. ԿԱՏՎԱԼՅԱՆ

ԲԱՅԱԶԵՏԻ ԲԱՐԲԱՌԻ ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԱՏՄԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱՌՈՒՄՈՎ ՄԵՐՁԱՎՈՐ ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ՀԵՏ

Հայ բարբառագիտությունը անցել է զարգացման երկարատև ուղի, որի ընթացքում նախ արվել են առանձին դիտողություններ բարբառային հատկանիշների կամ բարբառների վերաբերյալ, ապա առանձնակի ուսումնասիրվել ու նկարագրվել են տարբեր բարբառային միավորներ, կատարվել են բարբառների աշխարհագրական, ծնաբանական, հնչյունաբանական դասակարգումներ: Լեզվական հետազոտության այս բնագավառում իրենց մեծ ավանդն ունեն հատկապես Հր. Աճառյանն ու Ա. Ղարիբյանը:

Հայ բարբառագիտության հետագա զարգացման համար խիստ կարևոր նշանակություն ունի Գ. Ջահուկյանի առաջ քաշած՝ բարբառների բազմահատկանիշ դասակարգման սկզբունքը, որի կիրառումը թույլ է տալիս բարբառային միավորներն առանձնացնելիս ելնել օբյեկտիվ չափանիշներից և հնչյունաբանական ու քերականական առանձնահատկությունները բաշխել ըստ պատմաաշխարհագրական սկզբունքների (Գ. Ջահուկյան, 1972, 28): Գ. Ջահուկյանը հարկ է համարում «հայերենի նկատմամբ կիրառել լեզվաբանական աշխարհագրության սկզբունքները, բարբառային միավորներն առանձնացնելիս ելնել ոչ թե մեկ կամ երկու հատկանիշից, այլ հատկանիշների ամբողջությունից» (Գ. Ջահուկյան, 1972, 25): Նա իրավացիորեն նշում է նաև, որ շատ բարբառներ ունեն անցումային գծեր, իրենց տարբեր հատկանիշներով առնչվում են տարբեր բարբառների (Գ. Ջահուկյան, 1972, 26): Այս առումով, կարծում ենք, հայ բարբառագիտության համար շատ կարևոր դեր կարող է ունենալ բարբառների խմբային հետազոտությունը, ինչը թույլ կտա վերհանել բարբառների մերձավորության աստիճանականությունը, առանձնացնել տվյալ խմբի համար ընդհանուր հատկանիշները, հիմնական տարբերությունները միմյանցից և այլ խմբերից: Նման կարգի ուսումնասիրություններում իհարկե հարկավոր է հաշվի առնել համեմատվող բարբառների պատմաաշխարհագրական դիրքը, ինչպես նաև բնակչության տեղաշարժերը տարբեր ժամանակներում:

Մեր այս աշխատանքում Բայազետի բարբառի հնչյունաբանական իրողությունները դիտարկում ենք Արարատյան, Վանի, Մուշի, Դիադինի, Խոյի բարբառների հետ համեմատության մեջ՝ նկատի ունենալով բարբա-

ռիս կրողների պատմական հայրենիքի դիրքը: Ի դեպ, ըստ Գ. Ջահուկյանի հայ բարբառների բազմահատկանիշ դասակարգման՝ Մուշի, Վանի, Դիադինի բարբառները պատկանում են բարբառների արևմտյան, իսկ Արարատյան, Խոյի, Բայազետի բարբառները արևելյան խմբակցությանը:

Ընդհանուր գծերով Բայազետի բարբառի համեմատությունը հիշյալ բարբառների հետ հնչյունաբանական առումով (ըստ Գ. Ջահուկյանի ընտրած հատկանիշների) երևան է բերում հետևյալ պատկերը:

Ա. Ձայնավորական հատկանիշներ

1. Բայազետի բարբառին հատուկ շրթնային ա ձայնավորը համեմատվող բարբառներից որևէ մեկում չի հանդիպում:

2. Քմայնացած ա ձայնավորը, որ հիմնականում հանդիպում է արևելյան բարբառներում, հատուկ է Վանի, Խոյի, Դիադինի բարբառներին: Սա բնորոշ չէ Արարատյան, Մուշի բարբառներին. Բայազետի բարբառում հիմնականում հանդես է գալիս փոխառյալ բառերում, իսկ մնացած դեպքերում դրսևորվում է առանձին բառերում, առանց բաշխման որևէ օրինաչափության: Պետք է կարծել, որ Բայազետի բարբառում այս հնչյունը փոխառություն է և հարևան բարբառների ազդեցության արդյունք:

3. Երկբարբառային արտասանությամբ ե, ո հնչյունները հանդիպում են որոշ բարբառներում և ավելի բնորոշ են արևմտյաններին: Բայազետի բարբառում այս հնչյունները հանդես են գալիս օրինաչափորեն և ազդեցության հետևանք չեն: Այս հնչյուններն ունեն նաև Մուշի, Վանի, Դիադինի բարբառները, չունի Արարատյան բարբառը:

Խոյի բարբառում ե հնչյունը հանդիպում է ոչ բոլոր խոսվածքներում (Մ. Ասատրյան, 1962, 25), իսկ երկբարբառային ո–ից զատ մի շարք դեպքերում առկա է էо տարբերակը (Մ.Ասատրյան, 1962, 28–29):

4. Քմայնացած **ո**, **ու** հնչյունները, թվում է, ավելի բնորոշ են արևելյաններին: Այդպիսի հնչյուններ ունեն Վանի, Խոյի, Դիադինի բարբառները:

5. Շեշտակիր **յու**–ի դիմաց ոչ–շրթնային ձայնավոր ունեն Արարատյան, Վանի, Դիադինի բարբառները:

6. ույ – ի դիմաց ի ունի միայն Արարատյան բարբառը:

Ձայնավորական այլ հատկանիշներով դիտարկվող բարբառները միմյանցից էական տարբերություններ չունեն: Բարբառները միմյանցից տարբերող ձայնավորական հատկանիշները ներկայացվում են աղյուսակ 1–ում:

բարբառը	1	2,4	3	5	6
Արարատյան	–	–	–	+	+
Մուշի	–	–	+	–	–
Վանի	–	+	+	+	–
Խոյի	–	+	+	–	–
Բայազետի	+	–	+	–	–
Դիադինի	–	+	+	+	–

Եթե բացառենք բարբառախմբի համար ընդհանուր ձայնավորական հատկանիշները և հիմք ընդունենք միայն աղյուսակում ներկայացված հատկանիշները, կարող ենք արձանագրել, որ Բայազետի բարբառը համեմատվող բոլոր բարբառներից տարբերվում է իր շրթնային ա ձայնավորով: Արարատյան բարբառը մյուսներից տարբերվում է **ույ** – ի հնչյունափոխությամբ և երկբարբառներ չունենալով: Մյուս բարբառները միայն իրենց բնորոշ ձայնավորական հատկանիշներ չունեն: Ըստ աղյուսակի՝ ձայնավորական հատկանիշներով նույնական են Վանի և Դիադինի բարբառները. Բայազետի բարբառը Մուշի բարբառից տարբերվում է 1 ձայնավորական հատկանիշով, իսկ Արարատյան բարբառի հետ, որի ենթաբարբառն էր համարվում, Բայազետի բարբառն ունի ընդամենը մեկ ընդհանուր ձայնավորական հատկանիշ: Բարբառների հարաբերությունները ըստ ձայնավորական հատկանիշների ներկայացվում են նաև գծ. 1–ում, որտեղ հոծ գծերը նշանակում են առնվազն չորս հատկանիշների ընդհանրություն: Արարատյան բարբառը ոչ մի այլ բարբառի հետ այդքան ընդհանրություն չունի և նրանցից գտնվում է գրեթե հավասար հեռավորության վրա:

Բ. Բաղաձայնական հատկանիշներ

1. Բառասկզբի ձայնեղ պայթականներն ու հպաշփականները շնչեղ ձայնեղ են Բայազետի, Արարատյան, Մուշի բարբառներում:

2. Բառասկզբի ձայնեղ պայթականների և հպաշփականների դիմաց խուլ հնչյուններ ունեն Վանի և Խոյի բարբառները:

3. Բառամիջում և բառավերջում խուլ պայթականների և հպաշփականների ձայնեղություն կա Մուշի, մասամբ նաև՝ Արարատյան, Բայազետի և Խոյի բարբառներում:

4. Ոչ–բառասկզբի շնչեղ խուլերի ապաշնչեղացումը մասամբ հատուկ է Արարատյան, Բայազետի և Խոյի բարբառներին:

Գծագիր 1



5. Քմայնացած հետնալեզվայիններ ունեն Վանի, Դիադինի, Արարատյան, Խոյի բարբառները: Նման հնչյունները Բայազետի բարբառին հիմնականում բնորոշ չեն:

6. **Նգն,** նկն խմբերի փոխարեն յն հանդիպում է բոլոր բարբառներում, բացի Արարատյանից:

7. Ձայնավորահաջորդ հետնալեզվային պայթականների շփականություն նախաբաղաձայնական դիրքում ունեն Վանի և Խոյի բարբառները:

8. Տ–ի առնմանական փոփոխություն (**տն – նն, տր** – յր) ունեն Արարատյան, Խոյի, Բայազետի բարբառները:

9. Հպաշփականների շփականություն նախաբաղաձայնական դիրքում ունեն Բայազետի, Արարատյան, Դիադինի, Խոյի բարբառները:

10. Հ–ի դիմաց որևէ դիրքում յ ունեն Մուշի, Դիադինի, նաև Բայազետի բարբառները:

11. Բառասկզբում ձայնավորից առաջ հ – ի հավելում ունեն բոլոր բարբառները, բացի Արարատյանից:

12. Բառասկզբում հ – ի դիմաց ոչ առնմանական խ ունեն Բայազետի, Վանի, Խոյի, Դիադինի, մասամբ նաև Մուշի բարբառները:

13. Բառասկզբում հ –ի դիմաց ֆ ունի միայն Արարատյան բարբառը:

14. Խ – ի դիմաց տարնմանական հ նույնպես ունի միայն Արարատյան բարբառը:

15. Բառասկզբի ղ – ի դիմաց խ ունի Մուշի բարբառը:

16. Հայերենի համար ոչ սովորական կոկորդային բաղաձայնի կամ կ– ի առկայություն է դրսևորվում Բայազետի, Դիադինի, Խոյի բարբառներում:

17. Ր – ի քմայնացածություն հանդիպում է Վանի և Արարատյան բարբառներում:

Աղյուսակ 2

բարբառներ	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
Արարատյան	+	–	+	+	+	–	–	+	+	–	–	–	+	+	–	–	+
Մուշի	+	–	+	–	–	+	–	–	–	+	+	–	–	–	+	–	–
Վանի	–	+	–	–	+	+	+	–	–	–	+	+	–	–	–	–	+
Խոյի	–	+	+	+	+	+	+	+	+	–	+	+	–	–	–	+	–
Բայազետի	+	–	+	+	–	+	–	+	+	+	+	+	–	–	–	+	–
Դիադինի	–	–	–	–	+	+	–	–	+	+	+	+	–	–	–	+	–

Աղյուսակ 2 – ից երևում է, որ Բայազետի բարբառը բաղաձայնական հատկանիշներով առավել մոտ է Դիադինի, Խոյի և Մուշի բարբառներին, Վանի բարբառը՝ Դիադինի և Խոյի բարբառներին, Մուշի բարբառը՝ Բայազետի և Դիադինի բարբառներին, Խոյի բարբառը՝ Բայազետի, Վանի, Դիադինի բարբառներին, Դիադինի բարբառը՝ Բայազետի, Խոյի, Վանի, Մուշի բարբառներին: Այս հարաբերությունները ներկայացվում են նաև գծ. 2 – ում:

Գծագիր 2



Գծագրից երևում է, որ Արարատյան բարբառը իր բաղաձայնական հատկանիշներով խմբում ավելի մոտ է Բայազետի և Խոյի բարբառներին, սակայն խմբում մյուս բարբառների ընդհանրություններն ավելի շատ են:

Համադրելով ձայնավորական և բաղաձայնական հատկանիշների դրսևորումները բարբառային խմբում կարող ենք նշել, որ հնչյունաբանական առումով սերտ կապերի մեջ են Վանի, Դիադինի, Խոյի բարբառները, ինչպես նաև Բայազետի և Մուշի բարբառները:

Հնչյունաբանական առումով խմբի մյուս բարբառներից առանձնանում է Արարատյան բարբառը:

Օգտագործված գրականություն

1. Հ. Աճառյան, Քննություն Վանի բարբառի, Երևան, 1952:
2. Մ. Ասատրյան, Ուրմիայի (Խոյի) բարբառը, Երևան, 1962:
3. Մ. Ասատրյան, Լոռու խոսվածքը, Երևան, 1968:
4. Ս. Բաղդասարյան – Թափալցյան, Մշո բարբառը, Երևան, 1958:
5. Ռ. Բաղրամյան, Հայերեն բարբառներ, Երևան, 1972:
6. Ա. Գրիգորյան, Հայ բարբառագիտության դասընթաց, Երևան, 1957:
7. Ա. Ղարիբյան, Հայ բարբառագիտություն, Երևան, 1953:
8. Ք. Մադաթյան, Ալաշկերտի խոսվածքը, Երևան, 1985:
9. Ռ. Մարկոսյան, Արարատյան բարբառ, Երևան, 1989:
10. Գ. Ջահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, Երևան, 1972:

В. Л. КАТВАЛЯН

ФОНОЛОГИЧЕСКИЕ СВЯЗИ БАЯЗЕТСКОГО ДИАЛЕКТА С ДРУГИМИ ИСТОРИКО–ГЕОГРАФИЧЕСКИ БЛИЗКИМИ С НИМ ДИАЛЕКТАМИ

Резюме

Наблюдая фонологические реалии баязетского диалекта в историко–географическом плане в сравнении с близкими с ним араратским, ванским, мушским, диадинским, хойским диалектами, замечаем, что в фонологическом плане в этой группе наиболее тесны связи между баязетским и мушским, а также ванским, диадинским и хойским диалектами. Араратский диалект, поддиалектом которого в прошлом считался баязетский говор, имеет наименьшую фонологическую общность в сравнении с другими диалектами этой группы.

V. L. KATVALYAN

THE PHONETIC RELATIONS OF BAYAZET DIALECT WITH OTHER DIALECTS CLOSE HISTORICALLY AND GEOGRAPHICALLY

Summary

Investigating the comparative and dialectological analysis of Bayazet dialect phonetic events with those of other dialects close historically and geographically, Ararat, Van, Mush, Diadin, Khoy, we see that the relations of Bayazet and Mush as well as Van, Diadin, Khoy dialects are closer. The Bayazet speech which was formerly considered as a sub–dialect of Ararat dialect has the least phonetic similarities with the other dialects of this group.